ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

№ 2013-0-1-Ա

ք. Երևան 22.03.2013թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2013 թվականի մարտի 12-ի նիստում քննարկեց անհատ ձեռներեց Լուսինե Առաքելյանի (այսուհետ՝ բողոքարկող) կողմից ներկայացված «MADE-IN.AM» (հայտ N20120776) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի հայտը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N1538-Ն որոշման «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 90–րդ մասի 3–րդ կետի համաձայն, որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք ծառայում են ապրանքի աշխարհագրական ծագումը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված «MADE-IN.AM» ապրանքային նշանը, որը անգլերենից թարգմանաբար նշանակում է «արտադրված է Հայաստանում» չի կարող գրանցվել, քանի որ տվյալ արտահայտությունը մատնանշում է տվյալ ապրանքի արտադրման վայրը:

Բողոքի համաձայն՝ նշված ապրանքային նշանը ենթակա է գրանցման հետևյալ հիմնավորմամբ. «MADE» բառը նշանակում է «ստեղծել», իսկ AM-ը նշում է հայաստանյան ինտերնետային տիրույթը եւ «MADE-IN.AM» ապրանքային նշանը ներկայացնում է հղում դեպի նույնանուն կազմակերպության կայքը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության մերժման մասին որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ՝ հաշվի առնելով այն, որ

նույնանուն կազմակերպություն, որին հղում է կատարում ապրանքային նշանը, գոյություն չունի՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստր կատարված հարցմանը, իսկ ինչ վերաբերում է ապրանքային նշանի իմաստային նշանակությանը, ապա քարթրիջ ապրանքի վրա տվյալ ապրանքային նշանի զետեղումը տեղական սպառողին անմիջապես կհուշի տվյալ ապրանքի Հայաստանի Հանրապետությունում արտադրված լինելը:

Քննարկման արդյունքում բողոքարկման խորհուրդը պարզեց, որ «MADE-IN.AM» ապրանքային նշանը օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մատնանշում է ապրանքի աշխարհագրական ծագումը և բերված փաստարկները բավարար չեն բողոքը բավարարելու համար:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել անհատ ձեռներեց Լուսինե Առաքելյանի կողմից ներկայացված «MADE-IN.AM» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը եւ փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի նախագահ Գ. Մելքոնյան